Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-542[5]-31.03.2020-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» 1999 թվականի ապրիլի 28-ի ՀՕ-302 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի վերնագրում և տեքստում «քաղաքաշինական պետական տեսչությանը» բառերը փոխարինել «քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին» բառերով:

Հոդված 2. Օրենքի 14-րդ հոդվածի ՝

1. 1-ին պարբերության 1-ին նախադասությունում «քաղաքաշինական պետական տեսչությունը» բառերը փոխարինել «քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը» բառերով.

2. 1-ին պարբերության 2-րդ նախադասությունում «են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական պետական տեսչության տարածքային ստորաբաժանումների պետերը՝ ըստ դրանց կատարման վայրի» բառերը փոխարինել «է քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը կամ նրա տեղակալը» բառերով.

3. 2-րդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 15-րդ հոդվածում «քաղաքաշինական պետական տեսուչները» բառերը փոխարինել «քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ծառայողները» բառերով:

Հոդված 4. Օրենքի 16-րդ հոդվածում «քաղաքաշինական պետական տեսչության համապատասխան տարածքային ստորաբաժանման պետը» բառերը փոխարինել «քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը կամ նրա տեղակալը» բառերով:

Հոդված 5. Օրենքի 18-րդ հոդվածի՝

1. 1-ին պարբերությունում «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական պետական տեսչության համապատասխան տարածքային ստորաբաժանման պետն» բառերը փոխարինել «քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը կամ նրա տեղակալն» բառերով.

2. 2-րդ պարբերությունում «գործի վերաբերյալ եզրահանգումը» բառերից հետո լրացնել հետևյալ բառերով՝

«- խախտման վերացման համար տրված ժամկետը,

- տուգանքի փոխանցման համար հաշվեհամարը»:

3. 3-րդ պարբերությունը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Օրենքի 19-րդ հոդվածում «քաղաքաշինական պետական տեսչության պետը» բառերը փոխարինել «քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը» բառերով:

Հոդված 7. Օրենքի 22-րդ հոդվածում «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական պետական տեսչություն կամ տեսչության համապատասխան տարածքային ստորաբաժանում» բառերը փոխարինել «քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմին» բառերով:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-542[5]-31.03.2020-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» 1999 թվականի ապրիլի 28-ի ՀՕ-302 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի վերնագրում և տեքստում «քաղաքաշինական պետական տեսչությանը» բառերը փոխարինել «քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին» բառերով:

Հոդված 2. Օրենքի 14-րդ հոդվածի՝

1. 1-ին ~~մասի~~պարբերության 1-ին նախադասությունում «քաղաքաշինական պետական տեսչությունը» բառերը փոխարինել «քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը» բառերով.
2. 1-ին ~~մասի~~պարբերության 2-րդ նախադասությունում «են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական պետական տեսչության տարածքային ստորաբաժանումների պետերը՝ ըստ դրանց կատարման վայրի» բառերը փոխարինել «է քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը կամ նրա տեղակալը» բառերով.
3. 2-րդ ~~մասն~~պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 15-րդ հոդվածում «քաղաքաշինական պետական տեսուչները» բառերը փոխարինել «քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ծառայողները» բառերով:

Հոդված 4. Օրենքի 16-րդ հոդվածում «քաղաքաշինական պետական տեսչության համապատասխան տարածքային ստորաբաժանման պետը» բառերը փոխարինել «քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը կամ նրա տեղակալը» բառերով:

Հոդված 5. Օրենքի 18-րդ հոդվածի՝

1. 1-ին ~~մասում~~պարբերությունում «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական պետական տեսչության համապատասխան տարածքային ստորաբաժանման պետն» բառերը փոխարինել «քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը կամ նրա տեղակալն» բառերով.

2. 2-րդ ~~մասում~~պարբերությունում «գործի վերաբերյալ եզրահանգումը» բառերից հետո լրացնել հետևյալ բառերով՝

«- խախտման վերացման համար տրված ժամկետը,

- տուգանքի փոխանցման համար հաշվեհամարը»:

3. 3-րդ պարբերությունը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Օրենքի 19-րդ հոդվածում «քաղաքաշինական պետական տեսչության պետը» բառերը փոխարինել «քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը» բառերով:

Հոդված 7. Օրենքի 22-րդ հոդվածում «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական պետական տեսչություն կամ տեսչության համապատասխան տարածքային ստորաբաժանում» բառերը փոխարինել «քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմին» բառերով:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: